

# Պահանջ՝ բացահայտելու 2016թ. Սարի թաղում լրագրողների դեմ կիրառված բռնության դեպքերը

July 31, 2017

Պահանջ՝ բացահայտելու 2016թ. Սարի թաղում լրագրողների դեմ կիրառված բռնության դեպքերը



լուսանկարը՝ Ֆոտոլուրի

Մեկ տարի առաջ՝ 2016թ. հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը, Երեւանի Խորենացի փողոցում գտնվող շէնքի նստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի վրա «Սասնա ծռեր» խմբի հարձակումից հետո երկու շաբաթ տեւած դրամատիկ իրադարձությունները հասան գագաթնակետին: Իշխանությունների ձեռնարկած գործողությունների արդյունքում զինյալները հանձնվեցին, իսկ շարունակական բնույթ կրող հակակառավարական բողոքի ցույցերը ճնշվեցին՝ արցունքաբեր գազի, ծայնալուսային նոսակների եւ այլ հատուկ միջոցների կիրառմամբ:

Այդ գործողությունների ընթացքում ոստիկանների եւ նրանց աջակցությունից օգտվող քաղաքացիական հագուստով անձանց հարձակումների թիրախ դարձան նաեւ տարբեր ՁԼՄ-ների 27 լրագրող եւ օպերատոր, որոնցից 19-ը ենթարկվեցին ֆիզիկական բռնությունների, 8-ը՝ մասնագիտական գործունեության այլ խոչընդոտումների: Ընդ որում՝ այս ամենը զուգորդվել է լրատվամիջոցների աշխատակիցների ֆոտո եւ տեսախցիկները միտումնավոր ջարդելով կամ վնասելով, դրանց հիշողության սարքերն առգրավելով, նկարահանված կադրերը ոչնչացնելով եւ այլն:

Այս դեպքերի առնչությամբ հարուցված քրեական գործն ընթանում է արդեն մեկ տարի, եւ միայն այն փաստը, որ դրա շրջանակներում տուժող է ճանաչվել 21 լրագրող եւ օպերատոր, իսկ մեղադրանք է առաջադրվել ընդամենը 9 անձանց, վկայում է, որ Հատուկ քննչական ծառայության ձեռնարկած քայլերը չեն համապատասխանում բռնությունների ծավալներին: Նախաքննության անընդունելի ցածր արդյունավետության մասին է խոսում նաեւ այն, որ վերջին 8 ամիսների ընթացքում մեղադրանք է ներկայացվել միայն 1 անձի: Մինչդեռ համացանցում եւ ՁԼՄ-ների արխիվներում առկա տեսանյութերում բացահայտ երեւում են մի քանի տասնյակ բռնություններ իրականացնողներ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, եւս մեկ անգամ վերհիշելով 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների առնչությամբ լրագրողներին հասցեագրված շէնքի նախագահի ներողությունը, պահանջում ենք իշխանություններից անաչառություն դրսեւորել, պատշաճ արդյունավետությամբ իրականացնել նախաքննությունը եւ պատասխանատվության ենթարկել բոլոր մեղավորներին՝ անկախ զբաղեցրած պաշտոններից: Հակառակ դեպքում մենք ստիպված ենք լինելու փաստել, որ Հայաստանում կոծկվում են լրագրողների դեմ ուղղված նույնիսկ լայնածավալ բռնություններն ու խոչընդոտումները:

- ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**
- ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ**
- ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**
- ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ**
- ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ - ՀԱՅԱՍՏԱՆ**
- ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ**
- «ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ**

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

28 հուլիսի 2017թ., Երեւան

## Թեմատիկ նյութեր

[Amnesty International. Հայաստանի իշխանությունները պետք է հետաքննեն մարդու իրավունքների խախտման դեպքերը](#) [2]

[«Ինտերնետի հայկական տիրույթում բովանդակության գարգացման մասին»](#)

[ուսումնասիրություն](#) [3]

[Ինչպես լուսաբանել ընտրական և հետընտրական գործընթացները](#) [4]

[«Նա/Նե»-ի հանրային թղթակցի առաջին տեղի մրցանակը տրվեց ԼՀԱ-ի թղթակցին](#) [5]

[Obama World Blog. Վեց խորհուրդ հաջողված բլոգ ունենալու համար](#) [6]

### Source URL:

<http://www.jnews.am/demand-to-disclose-cases-of-violence-against-journalists-during-july-events>

### Links:

[1] <http://www.jnews.am/files/%20%D5%A9%D5%A1%D5%B2%D5%B8%D6%82%D5%B4.jpg>

[2] <http://www.jnews.am/amnesty-international-statement-elections-2013>

[3] <http://www.jnews.am/report-on-content-of-armenian-internet-segment>

[4] <http://www.jnews.am/covering-elections>

[5] <http://www.jnews.am/anushik-avetyan-got-nane-media-award>

[6] <http://www.jnews.am/successful-blogger>